

ԲԱԺԻՆ 6

ՄՇՏԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՇԱՐՇԵՐԸ (ՄԻԳՐԱՑԻԱՆ)

Մեթոդաբանական պարզաբանումներ

Տվյալ բնակավայրում բնակվելու անընդհատությունը կախված չի եղել գրանցման առկայությունից և դրա բնույթից:

Տվյալ բնակավայրում բնակչության բնակության անընդհատությունը չի համարվել խախտված.

- միևնույն շրջանի սահմաններում մի գյուղական բնակավայրից մյուսը տեղափոխվելու դեպքում,

- տվյալ բնակավայրից ժամկետային զինծառայության և արտասահման գործուղման մեկնելու դեպքում,

- տվյալ բնակավայրից բոլոր այն մեկնումների դեպքում, որոնք կապված չեն մշտական բնակավայրը փոխելու հետ: